

ՆԱԽԱՐԱՐԱԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՅ ԻՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Նախարարաց խորհուրդը երեկ երեկոյան Թանգարանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ ժողովը, գլխավորութեամբ վարչապետ Սեյիմ Հըսի:

Ժողովը քննարկեց 26 կետերէ բաղկացած օրակարգ մը: Կարեւորագոյն հարցերը եղան հարաւարակ լիբերալիզմի սահմանափակումը, իսրայէլեան խախտումները քննարկումը, ելեկտրական ցանցերու վերանորոգման ծրագիրը, նուիրատու երկիրներու Պէյրութի խորհրդակցութիւնը, ինչպէս նաեւ նախարարութիւններու եւ խորհուրդներու միացման հարցը, որ վաւերացուեցաւ նաեւ խորհրդարանին կողմէ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՒՐԱՏՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԿԸ ԳՈՒՄԱՐՈՒԻ ԱՅՍՕՐ

Լիբանանի նուիրատու երկիրներու եւ կապակերպութիւններու «ապատարուած շրջաններու եւ անոնց սահմանակից վայրերուն վերաշինութեան ու Լիբանանի բարգաւաճման» թեմայով խորհրդակցութիւնը քննարկեց վարչապետ Սեյիմ Հըսի, այսօր, առաւօտեան ժամը 9:00ին:

Ժողովը երեք նիստերու ընթացքին պիտի քննարկէ երկու ծրագիրներ: Առաջինը՝ ապատարուած շրջաններուն եւ անոնց սահմանակից շրջաններուն անմիջական կարիքները ապահովելու 260 միլիոն տոլարի օժանդակութիւնը, երկրորդը՝ Լիբանանի բարգաւաճման հընգամեայ ծրագիրը, որուն անհրաժեշտ է 1.3 միլիար տոլար:

Լիբանանեան իշխանութեան պատրաստած այս ծրագիրներուն գրքովը պիտի տրամադրուին ժողովակարգներուն, գրքովին մէջ կը ներկայացուին Լիբանանի տնտեսական վարգացումները, կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը, հարաւի մէջ տիրող վիճակը եւ երկիրն տնտեսական կարողականութիւնները: Գրքովը նաեւ կ'ընդգծէ հարաւի բարգաւաճման կարեւորութիւնը ոչ միայն Լիբանանի, այլեւ ամբողջ շրջանին կայունութեան համար:

ԼԱՐՍԸՆ ՀԱՍՏԱՏԵՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ



Զօր. Ամին Հըթէյթ եւ Թէրի Ռոտ Լարսըն կը ստուգեն իսրայէլեան խախտումները

ՄԱԿի ընդհանուր քարտուղարի յատուկ պատուիրակ Թէրի Ռոտ Լարսըն երէկ Գօր. Ամին Հըթէյթի ընկերակցութեամբ այցելեց Մանարա եւ ստուգեց սահմանային վրայ կատարուած իսրայէլեան խախտումը, հաստատելով, որ իսրայէլեան ուժերը չեն հեռացած իրանեան հողերէն: Զօր. Հըթէյթ եւ անոր ընկերակցող իրանեան խմբակը նշաններ գետեղեց՝ ճշգրտելու իսրայէլի պարպելիք տարածքը:

Լարսըն կ'ըստին Ֆինիլի մէկ ուղղաթիւով հասած էր իրանական գործաւոր Շաքրալի կեդրոնատեղին, ուրկէ Ֆինիլի փոխ հրամանատար Գօր. Ճէյմս Սթրինընի հետ ուղղուած էր ղէպի Ապատ, ստուգելու համար կատարուած խախտումները:

Այս ստուգումներէն ետք Լարսըն ըսաւ, որ հաստատուած է «Կապոյտ Գիծ»ի խախտումներու գոյութիւնը եւ կը մեկնէ Իսրայէլ, սպայակոյտի պետ Շաւուր Մոֆազի հետ քննարկելու համար հարցը:

Հարաւի մէջ Ֆինիլի ուժերուն տարածման ժամկետին մասին հարցումի մը պատասխանելով, ան յոստայտեց, որ գործողութիւնը կը սկսի յառաջիկայ 24 ժամերուն:

ԺՈՄՊԼԱԹ ԱՅՅԵԼԵՑ ՇԷՅՆ ՀԱՍԱՆ ՆԱՍՐԱԼԼԱՅԻ

Ընկերվար Յաւազի իմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ երէկ այցելեց Հըրգայալի ընդհանուր քարտուղար Հէյն Հասան Նասրայալի: Հանդիպումէն ետք, ան յայտարարեց, որ հանդիպումը ընտրական ընդմիջումի եւ ըսաւ, որ ինչ ալ ըլլան ընտրական ժամանակաւոր նկատառումները, Հըրգայալի ընկերներուն հետ անցեալին հաստատուած դաշինքը ի գօրու պիտի մնայ նաեւ ապագային:

Ժոմպլաթ ըսաւ, որ Ալէյ - Պապատ ընտրաշրջանի իր կուսակցութեան թեկնածուներուն ցանկին մէջ պիտի չըլլան թեկնածուներ, որոնք Հըրգայալի հետ ճակատումի տպաւորութիւն կրնան ձգել:

«Երկու կուսակցութիւններուն միջեւ յարաբերութիւնը ընտրութիւններէն առաջ կար եւ պիտի մնայ անոնցմէ ետք ալ», ըսաւ Ժոմպլաթ, մարտիկով որ ընտրութիւնները ժողովրդավարական ըլլան:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԱՒԱՐՏԵՑ...

տական մնայուն պաշտօնեաներ չեն նկատուիր անոր անդամները, հետեւաբար կառավարութիւնը դէմ չէ այդ պաշտօնը «պետական նախարար» վերածելու:

Պրըքի արձանագրել տուաւ, որ գաղթականներու հարցերու նախարարութիւնը կը ջնջուի եւ գոյութիւն ունենայ կը դադրի, երբ ամբողջապէս գաղթականներու տունդարձը:

Երեսփոխան Պըշարա Մըրհէճ նկատել տուաւ, որ վարչական ապակերպութեան վարգացման ու հաստատման օրերուն կը ջնջուի քաղաքապետութեանց հարցերու նախարարութիւնը, եւ պահանջեց առանձին նախարարութիւն պահել պայն:

Փոխ վարչապետ Մըր իշեցուց, որ քաղաքապետութեանց հարցերը ներքին գործոց նախարարութեան մէկ բաժանումներին ծիրին մէջ էին եւ որպէս նախարարութիւն անիկա ձախողած է, ասոր կողքին կայ իրատեսութիւններու խաչաձեւում, նկատի առած, որ քաղաքապետութեանց որոշումները վաւերացնող գաւառապետներն ու նահանգապետները վարչականօրէն ենթակալ են ներքին գործոց նախարարին:

Մըրհէճի առաջարկը յետ քուէարկութեան մերժուեցաւ:

Նախարարութեանց միացման բաժնի քննարկումէն ետք մասնակի բարեփոխումներով որ-

ՌԵԳՐՈՒԵՑԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

Ժողովը այնուհետեւ անցաւ օրինագիծի պետական խորհուրդներու միացման բաժնին: Օրինագիծը կ'ըսէ, թէ Շինարարութեան եւ Բարգաւաճման, կառուցողական ծրագիրներու իրագործման եւ Պէյրութի մէջ ծրագիրներու խորհուրդները կը միացուին ու կը կապուին Շինարարութեան եւ Բարգաւաճման պետական հաստատութիւնը, որ ենթակայ է «Օրագրումի Գերագոյն խորհուրդի» վերահսկողութեան, իսկ խորհուրդին մաս կը կապուին վարչապետը (նախագահ), ներքին գործոց, էլեկտրոնի, հաղորդուող շինութեանց եւ երկու այլ նախարարներ, որոնք կը նշանակուին հրամանագրով:

Նախկին վարչապետ Հարիրի նկատել տուաւ, որ այս խորհուրդներու միացումը ծախսալից է, մինչ միացման ծրագիրին որդապատմանը ինստիտուցիան է, ասոր կողքին Պէյրութ կը վրկուի ծրագիրներու իրագործման իր խորհուրդին:

Ասոր կողքին երկու նախարարները կ'ամ պետք է ճշդունին, կ'ամ պետք է սահմանափակել անոնց լիազօրութեանց ժամանակաշրջանը: Մըրհէճ առաջարկեց դուրս ձգել Պէյրութի ծրագիրներու խորհուրդը, բայց առաջարկը չկըրցաւ անհրաժեշտ մեծամասնութիւն ապահովել:

Կարգ մը երեսփոխաններ պահանջեցին հրաժարիլ ծրագրումի խորհուրդի երկու նախարարներէն եւ քննարկումը անդադարձաւ համայնքային բաժանումին: Երեսփոխան Մարուան Համատէ պահանջեց ազգային հաշտութիւնը պահպանելու համար անփոփոխ պահել այդ յօդուածը:

Վարչապետ Հըս առաջարկեց աւելցնել «երկու նախարարները կը նշանակուին կառավարութեան կապակերպութեան միջոցին հրապարակուող հրամանագրով» նախադասութիւնը, եւ առաջարկը ընդունուեցաւ:

Միացեալ խորհուրդի վերահսկողութեան գծով Հարիրի առաջարկեց, որ նախարարաց խորհուրդին վերահսկողի այս իրատեսութիւնը, բայց ժողովը որդեգրեց առաջարկին մէկ մասը, համաձայնելով, որ վերահսկողութիւնը ծրագրումի գերագոյն խորհուրդը կատարէ վարչապետին կողքին:

Հարիրի նաեւ առաջարկեց վեց ամիսով յետաձգել խորհուրդներու միացման գործադրութիւնը, մինչ կառավարութիւնը պիտի գործարարէ, որ օրինագիծը գործադրուի եւ որոշումը վաւերացուեցաւ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ԿՈՉ ԲՈԼՈՐ ԶՈՐԵ-ՍԱՐԶՊԱՆՑԻՆԵՐՈՒՆ (Stopp-ten)

Թանկագին հայրենակիցներ եւ ընթերցողներ, Գրքեք իր աւարտին հասած է Չորը-Մարգոյանի (Stopp-ten) «Յուշամատենը», որ կը ներկայացուցէ Կիլիկիոյ այս դրախտավայրին պատմական անցեալը, հերոսական երեք ինքնապաշտպանութիւնները, աւանդութիւնները, սովորութիւնները, մտաւորականութիւնը (ամենց ստեղծագործութիւններէն նմուշներ), եւ այլ ծանօթ դէմքեր:

Մեր փափաքն է «Յուշամատենը» ընթերցողներուն տրամադրութեան տակ ղեկը աւելի նոյն ու ներկայացուցական պատկերով: Արդ. կը ինդրերն ձեռք մը, սիրելի հայրենակիցներ եւ ընթերցողներ, որ մինչեւ 20 Օգոստոս 2000, տեղեկութիւններ ուղարկեք (բերանացի կամ գրաւոր)՝ ձեր շրջանակին ու շրջապատին մէջ զանազան աստիճաններու մէջ յաջողած չորը-Մարգոյանցիներու մասին: Կը ինդրերն նաեւ, որ դուք անձնապէս ըլլաք նախաձեռնողը, մեզի տրամադրելով իրենց հասցեն, նկարը, հակիրճ կենսագրութիւնը եւ իրենց աստիճանները մէջ արձանագրած յաջողութիւնը:

Կանխայայտ շնորհակալութեամբ,
ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ
(Խմբագիր)

Minas Kojayan
6915 Willis Ave.
Van Nuys, CA 91405
Tel. (818)782-7437
E-Mail MINASKO@AOL.COM

Հ. Յ. Գ. «ԲԱԲԳԷՆ ՍԻԷՆԻ» ԱԿՈՒՄԲԵՒ ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆԵՐ 103ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Նախագահութեամբ՝
Պետական երեսփոխան
Տէր ԵՒ ՏԻԿԻՆ ԺՈՐԺ ԳԱՍՍՐՃԻԻ

Մասնակցութեամբ՝
Երգիչներ՝ ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ
եւ ԱՐԱՐԱՏ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Ընկերակցութեամբ՝
ՍԵԿՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ
ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԻՆԻ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 29 Յուլիս 2000ին, երեկոյան ժամը 9:00էն սկսեալ, Համազգայինի շրջափակին մէջ, Այննաթ:

ՎԱՐԶՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

• Պուրե Համուտ, Քաղաքապետարանի շէնքեր: Հեռ. 03-648916:

ԳՐԱԽՈՒՄ ՕՐ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000 ԱՁԳ. Ս. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄՍԱՅԱՆՔ

• «ԿԵԱՆՔԷ ՓՐՑԸ-ԻԱՄ ԷՋԵՐ»
Հեղինակ՝ ՍՈՆԱ Պ. ՆԱՇԵԱՆ
Պէյրութ 2000
* * *
• «ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ԵՒ ԹԱՐԳ ՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ»
Հեղինակ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԵՆՇԵՆԿՆԵԱՆ
Համակարգչային շարժք եւ տղագրութիւն «ՍԻՓԱՆ» հրատարակչատուն
Պէյրութ 2000

ԲԱԽՏԱԻՈՐՈՒՄ

Տէր Եւ տիկին
Յովիկ Եւ Լիզա Պէլեան

բախտաւորուած եւ մասնազուտով մը՝
ԿԱՐՕՏ
Պէյրութ, 24 Յուլիս 2000

ԳՐԱԽՈՒՄ ՕՐ

ՈՒՐԱԹ, 11 ՕԳՈՍՏՈՍ 2000 Հ.Յ.Գ. «ԳԱՐԵԳԻՆ ՆՈՐԷ» ԿՈՍԻՏԷ

Կ՛ՈՒԶՈՒԻ

• Քարտուղարուի մը ուկերչական գրասենեակի համար: Հեռ. 01-242549:

STUDIO
Lantern
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
նկարահանումներ
Հեռ. 01-268866
եւ 03-695399

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հեռ. 01-261115
1.- 2000-2001 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին ամէն օր ժամը 9:00էն 12:00:
2.- Կրթական նոր համակարգին համապատասխան, 2000-2001 տարեշրջանին վարժարանի նախակրթարանի բաժինը պիտի ունենայ նաեւ վեցերորդ դասարան:
3.- Մանկամտերի բաժինը կ'ընդունուին մէկ տարեկան փոքրիկները, պայմանաւ որ կարենան քայլի:
4.- Երբեքեկը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԶԷՅԹՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կը յայտնենք, որ Կիրակի, 23 Յուլիս 2000ին, "Garden Tower" պանդոկի հիւրասրահին մէջ կազմած գէյթուցիներու ընդհանուր ժողովին, Տիրալը եւս. Փանոսեանի եւ տէր Օշակունիի նախագահութեամբ, օրինակաւ ընթացող ընտրութեան վարչութիւնը եւ վերահաստատուեցաւ Զէյթունի Հայրենակցական Միութիւնը:

Նորընտիր վարչութեան անդամներն են՝
Պրն. Պրն Արապեան՝ ատենադատ
Պրն. Լեւոն Նոյնուտեան ատենադատ
Պրն. Վազգէն Մուրադեան գանձապահ
Պրն. Ժան Կիրակեան փոխ ատենադատ
Օրդ. Անի Մոսկոֆեան քարտուղարուհի
Պրն. Սարգիս Նոյնուտեան խորհրդակալ
Պրն. Կարո Մեկկիշեան խորհրդակալ

Վերոյիշեալ ժողովին ներկայ գտնուող հայրենակիցներուն կողմէ եղած նուիրատուութիւններէն հաւաքուեցան կոնկրետ գումար մը, որուն մասին պիտի անդրադառնանք մօտիկ ապագային:
Նորընտիր վարչութիւնը արդէն իսկ ստանձնեց միութեան պատկանող կնիքներն ու արխիւը:

ԿԻՒԱՆ
Պէյրութ, 25 Յուլիս 2000

ԶԱԻԱՐԵԱՆԱԿԱՆ

ԶԱԻԱՐԵԱՆԱԿԱՆ

ՄԵՐ ԽՕՍՄԸ


ԱՆՁՆԱԶՈՂՆԵՐԸ

Տարիներ շարունակ Լիզպոնի հիմ-գի գործողությունը կը ներկայացուներ իբրև անձնասպանական գործողություն: Աւելի ճիշդ է, որ այս բառին տեղ ուրիշ բառ մը գործածուի՝ «անձնագորհակամ արարք»:

Լիզպոնի տղոց արարքը անձնագորհակամ էր, որովհետև անկա կը բխէր խորհուրդէ մը, գաղափարէ մը ու մահաւանդ մեզի կը փոխանցէր ու կը շարունակէ փոխանցել պատգամ մը, հիմնուած էրեք հիմնական արժեքներու

ճաշ, չընկրկի, պէտք է որ ունենայ ենթակայական մղիչ մը՝ հաւատքը: Կամքը առանց հաւատքի կը մահնի գիճուողի մը՝ առանց նպատակի, մտաւորականի մը՝ առանց գաղափարաբանութեան:

Մենք այսօր պէտք ունինք հաւատքի, մահաւանդի՝ նիւթապաշտ ու պատեհապաշտ այս ժամանակաշրջանին, երբ իւրաքանչիւր անձ կը հեռանայ էութենէն, մնալուցէն ու ճշմարտէն, մտնելու համար պարապին, երկրոր-



վրայ՝ ԿԱՄԸ, ՀԱԽՍԸ ու ՆՈՒԻՐՈՒՄ: Առանց կամքի ժողովուրդներու մը դաժն ազատագրական պայքարները կը մնան թերի, կիսաւարտ ու ապարդիւս: Կամքը, որ կը դրսեւորէ անհատի մը կամ հաւաքականութեան մը ազատութեան էութիւնն ու լինելութիւնը, հիմնական դերակատարութիւն ունի յաղթանակ կերտելու մէջ: Այս մէկը հիմնադրաբար շատ լաւ գիտէին ու կը գիտակցէին, թէ իրենց արարքը ո՞չ առաջինն էր եւ ոչ ալ վերջինը պիտի ըլլար այս յաղթական երթին մէջ:

Որպէսզի կամքը յարատեւէ, չթուլանալու կ'ուզուի: Արա, Սարգիս, Սեդրակ, Սիմոն եւ Վաչէ հաւատացեալներ էին, որոնք պատրաստ էին նուիրուիլ իրենց ամենէն թանկագինը՝ կեանքը: Նուիրումը կ'ենթադրէ կամք ու հաւատք, որովհետեւ անոր մէջ կայ ինքնամոռացութիւն, այսպիսով իրենք ու վերջապէս՝ անձնագորհակամ:

Լիզպոնի տղաքը մեզի չփոխանցեցին միմիայն վրիժառու յեղափոխականի գիճեալ պայքարը, այլ նաեւ արեւելիկ յարատեւ կամք, մաքրագոյն հաւատք ու վեհաճոհ նուիրում:

ԱՊՐԻԼ ԱՆՈՆՅ ԹԵԼԱԴՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Դժբխտարար մարտունակութեան գագաթնակէտ նուաճած հայ յեղափոխական պայքարի ռահվիրաները իրենց պատգամներով միասին կը սառնին պատմութեան մէջ՝ դառնալով առասպել, տարին քանի մը անգամ յիշուելու, մեզ մղելու յեղափոխական երգ երգելու, յուզելու եւ քանի մը տող գրելու:

Իսկ մեր յեղափոխական աւանդները մեր ազատատենչ եւ պայքարունակ ժողովուրդին սիրագործութիւնները թուականներու յիշողութեան կ'անցընեն, երբեմն ակումբներու զուգահեռակները զարդարելու, մամուլին քանի մը էջերը լեցնելու եւ հրատարակելու ձեռնարկներ կազմակերպելու: Աւելին՝ հերոսները եւ հերոսական նուաճումները ոգեկոչելու ընթացքին շատ յաճախ ճառեր արտասանելու եւ խրատ տալու փորձութեան մէջ կ'իյնանք: Գարկ տալով միայն յեղափոխական ռումբի լիզմին եւ ամբողջատարութեան: Մինչդեռ մեր նահատակներն իւրաքանչիւր մեր պայքարը ընդարձակելու հաւատքով, մեզ յեղափոխական աւանդներով վերածնունդ տալու, մեր պայքարը իմաստաւորելով եւ այժմ կանանցնելով հանդիսացաւ ազգօգուտ աշխատանքներու մեր մասնակցութեան որակը բարձրացնող մղիչ ուժ:

Որքանո՞վ այսօր մեր նահատակ ընկերները կ'ապրին մեր մէջ: Որքանո՞վ այսօր կ'արժեւորենք անոնց եզակի գոհարները, անոնց խօսքը գործով հաւասարակընդոտ առաքելութիւնը: Որքանո՞վ կ'ըմբռնենք անոնց մարտահրաւրչներուն անժամանցելի անհրաժեշտութիւնը, դժուար է ըսել:

Չիրո՞ղ դարակիրներն, երբ համաշխարհայնացումը կը սպառնայ մեր ազգային արժէքներուն, ինչպէս նաեւ թուրքիան իր քարոզչական մեքենայով եւ տնտեսական նուաճումներով կը փորձէ չընթացել Հայ Դատի բոլոր աշխատանքները, մեր հերոսները բոլոր ժամանակներէ աւելի կը խօսին մեզի եւ նոր մարտահրաւրչի եւ հրամայականի առջեւ կը դնեն հայ երիտասարդութիւնը անխորտի, առանց նկատի առնելու գաղափարական տարբերութիւններն ու դաւանանքը:

Կ'ընդունինք, որ թէ՛ Հայրենիքի եւ թէ՛ Մփիւռքի երիտասարդութիւնը ամէն օր ենթակայ կ'ընթացան ազգայնացմանը, որոնք օրէ օր քիչ մը աւելինով մեզ կը հեռանեն հայկականութենէն՝ միայնակ օտար բարբերու սպաննող տիղմին մէջ: Կ'ընդունինք, որ Չիրո՞ղ դարակիրներն հայ երիտասարդը պէտք է քայլ պահէ ժամանակակից նորութիւններու հետ, որոնք կ'ապրեն հայկականութեան հետ, կամ աւելի ճիշդը, չեն հակադրու-

ւիր հայկականութեան, սակայն յստակ պէտք է ըլլայ, որ մեր գոյութիւնը իբրեւ հայ արժատագնելու եւ մեր ազգային արժէքները յաւերժացնելու համար հարկ է գիտակցել մեր ազգային արժանապատուութեան: Ստիպողաբար չէ, որ հայկականութիւնը, պիտի ըլլայ մեր կեանքին առանցքը, այլ ընդհանրապէս, ան պէտք է մաս կազմէ մեր կոլեկտիւնը եւ մեր կազմաւորման:

Լիզպոնի տղոց անժամանցելիութիւնը կ'ամրապնդուի ամէն տարի, որովհետեւ անոնց գործողութեան մեկնակետն էր Հայ Դատի աշխատանքներուն ընդարձակումը: Անոնք Լիզպոնի գործողութիւնն ենք միամտութիւն չունէին Արեւմտահայաստանը ազատագրուած տեսնել, սակայն խորունկ հաւատք ունէին, որ պայքար պիտի ընդարձակուի եւ մեր իրաւունքներու վերատիրացումը պիտի իրականանայ մեր յարատեւ աշխատանքին, յարատեւ գործին ճամբով:

Դաշնակցութեան մէջ չկան սիրելի եւ ոչ սիրելի աշխատանքներ, կայ միայն գործի անհրաժեշտութիւն: Յարատեւ աշխատանքով տոգորուիլ դաշնակցականին համար նկարագրային գիծ է: Եթէ մեր մէջ չվերածնունդի Ջաւադեանի «Խօսքը առանց գործի մեռեալ է» պատգամը եւ մեր նահատակներէն ժառանգ մնացած մարտունակ նկարագրերը, Հայ Դատի աշխատանքները դիւրաւ կ'ընեն խափանուելի թշնամիին ծաւալապաշտ եւ հակահայ դաւերուն դիմաց:

Եթէ Լիզպոնի տղաքը մեր ժամանակին 17 տարի առջ կը պատգամէին թուրքիան բարոյապէս ընկճել գագաթնակէտ նուաճած գինեալ պայքարով, այսօր թշնամին պարտութեան մատնելու մեր ռազմավարութիւնը թշնամին յաւաքուած ճանչնալու հրամայականին առջեւ կը դնէ մեզ: Մեր թշնամիին գորտելու պէտք չէ անտեսել եւ ոչ ալ արհամարհել, պէտք է յաւաքուած ճանչնալ այդ գորտելուներէն ուժ դառնալու համար:

Եւ ահա այսպէս մեր նահատակները իրենց կեանքին թելադրական օրինակով, իրենց պատգամներով եւ մարտահրաւրչներով, դաշնակցական իրարայրն օրինակներով, իբրեւ յեղափոխական նկարագրի եւ գաղափարի մարտունակութեան յաւաքուած արտայայտիչներ, խօսքը գործի վերածնող առաջամարտիկներ, Դաշնակցութեան բարոյականութիւնը անխաթար պահող «Դրոյն ժառանգ վե՛հ խնթներ» պիտի ապրին մեր մէջ՝ իբրեւ մեր գոյութիւնը իմաստաւորող ռազմիկներ:

ՍՈՒՆԻԱ

«ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ ԶՈՂՈՂՈՒԹԻՒՆ Կ'ՈՒՉԷ»

Մեր այսօրուան կեանքին մէջ օրէ օր աւելի եւս կարիք կը զգանք մեր հաւաքական կեանքը առաջնորդող օրինակներու եւ այդ օրինակներուն ճամբէն ընթացող նուիրելիներու, որոնք նոր շուրջ տան արդէն իսկ ճահճացած մեր ազգային հասարակական առօրեային:

Սակայն անհրաժեշտութիւնը կը կայանայ ոչ թէ ինչ որ - նուիրելիներու՝ գոյութեան, այլ՝ այդ նուիրելիները աշխատանքի մղող մթնոլորտին առկայութեան մէջ. մթնոլորտ տեւողութեան իրաւիչակ, որոնք անհրաժեշտաբար պիտի ստեղծեն մեր իրականութեան նոր շուրջ հաղորդող ենթակայական տուեալներ:

Անկեղծ ըլլանք խոստովանելու, որ այսօր մեզ շրջապատող առարկայական վիճակները գլխաւորաբար իրենք են, որ անհրաժեշտ հակադրութիւնը չեն ստեղծեր այսօրուան հայ մարդուն մէջ զինք շրջապատող եւ իր հաւաքական կեանքը հարուածող երեւոյթներուն դէմ:

Իրեւոյթներ, որոնք յաճախ պէտք էր զայրոյթ եւ բարկութիւն արթնցնէին. յիշեցնէին, որ Յեղասպանութենէն վերապրողներուն երրորդ սերունդը արդէն իսկ բռնած է իր պայքարը հարեւոյսը ընդմիջող սոստատարութեան մատնելու ճամբան. յիշեցնէին այլեւս ինքզինքը քաղաքականապէս չճանչցող ամբոյսի մը, որ մեր այսօրուան իրականութիւնը աւելի վարդազոյն չէ, քան անխորթ ժամանակաշրջաններուն:

Ին որովհետեւ մեր իրականութիւնը վարդազոյն չէ երբեք, աւելի քան որեւէ այլ ժամանակ մեզի համար ներքին պէտք է հանդիսանայ հայ ժողովուրդին ու հայրենիքին զգաւորութեան բազմաթիւ առջեւ ողջակիցութեան Լիզպոնի տղոց խօսքը, ոչ անպայման իրենց ժամանակաշրջանի մթնոլորտը մեր օրերուն փոխադրելու տեսակէտէն, այլ նախ եւ առաջ իբրեւ հաւատարմ հանգանակ՝ վաղուան մարտահրաւրչները դիմակալելու համար:

Լիզպոնի հիմն յողաքը իրենց գործով ու մահաւանդ խօսքով եկան գաղափարական նոր լիցքաւորում տալու հայրենեան՝ իր տարած ազգային ազատագրական պայքարին մէջ: Ջարմանալի թող չթուի երբեք, որ իրենց պարզ, անպարտաւոր, երբեք մեղմ հայրենի անշուք խօսքերը աւելի մեծ ազդեցութիւն գործած են ու տակաւին կը գործեն, քան հսկայական հատորները մէջ հրապարակուած յեղափոխական տեսութիւնները:

Ահա այսին պատճառով կը կայանայ գործող խօսքին հետ գոյգործելու գաղափարը, ինչ որ մեր սերունդին կը պակասի... Մեր առօրեան օրէ օր կը ճապարհի, եւ մենք օրէ օր կը պարպուինք գաղափարականութենէ: Անհրաժեշտ է նշել, որ այլեւս կարեւորութիւն չենք տար շատ մը սկզբունքներու, որոնք տակաւին տար տարի առաջ կը ցնցէին մեր գաղափարային կեանքը իր արմատներէն...

Այո՞, մեր կիսատ մնացած եւ շարունակող «պայքարը գոհողութիւն կ'ուզէ» նախ եւ առաջ: Մենք մեր մտքերում մէջ պէտք է վերախաղախենք Սիմոն Ջաւադեանի

ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ. ՅԵՐԱՓՈՒՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԶՕՇԱՓԵԼԻ ԱՊԱՅՈՅՑԸ

«Անոնք, որ իսկան հայրենիքի համար, պիտի չհաշուուին մեռածներուն մէջ... Ո՛չ մէկ կեանք մեզի պիտի տար ա՛յն, ինչ որ մեր հերոսներուն երիտասարդութիւնը ընծայեց մեզի... Չկայ՝ որեւէ զոհողութիւն, որ կարելի է բաղդատել անոնց ըրածին հետ. չկայ որեւէ փառք, որ կրնայ բարձրանալ անոնցմէ աւելի վեր, ո՞չ իսկ երախտագիտութիւն մը, որ գերազանցէ անոնցը... Աշխատանք, ուրեմն, որ անոնց տեսնեն իրենց արժանի գործին եւ իրենց իտեալին վայել խօսքերուն իրականացումը...»

ՍՈՐՈՍ ՄԵԹԵՆԻԿԱ (1862 - 1949)

27 Յուլիս 1983ին Հայ Յեղափոխական Բանակի կողմէ կազմակերպուած անձնասպանական յարձակումը Փորթուգալի մայրաքաղաք Լիզպոնի թրքական դեսպանատան վրայ, շրջադարձ մը կ'արձանագրէր թուրք պետութեան դիւանագիտական ներկայացուցիչներու եւ պաշտօնական հաստատութեանց դէմ ծաւալած զինեալ գործողութիւններուն մէջ: Ուժական եւ ցնցիչ այդ արարքով եւ անոր ետին կանգնող գաղափարական առաջարկներով Լիզպոնի հիմնը կը կարգուէր ընթաց, Վաչէ Տաղիւնը, Սիմոն Եահանիան, Սեդրակ Աճեմեան եւ Սարգիս Աբրահամեան, Թուրքիոյ եւ համայն աշխարհին գործնապէս կը պատգամէին, որ իրաւարկուած ժողովուրդի մը դատին տրկանցնելու վճռակազմութիւնը սահման չունի:

Գնահատել եւ նսեմացնել նման արարքները: Օրին բոլորին յստակացած էր եւ այսօր անգամ մը եւս պէտք է յստակացնել, թէ լիզպոնեան գործողութիւնը ընթացիկ վերածնունդի մեքենայ էր, ոչ ալ միջազգային ակաբեկչութիւն, ինչպէս ոմանք ուզեցին կամ կ'ուզեն տեսնել: Անկա եւ պայքարի նպատակներ կը հետապնդէր եւ կը բողոքէր հայ ժողովուրդին դէմ գործողութեան անարդարութեան դէմ: Անկա յեղափոխական ուժնայաշարութիւն էր. լիզպոնեան նահատակներու պաշտած տեսլականը ամբողջ ժողովուրդի մը արդար իրաւունքն էր: Ողջակիցում մը չէր, որ քարոզչական քաղաքական նպատակներ կը հետապնդէր, որովհետեւ գերազույց գոհաբերութեան օրինակներ կը տալը չունէին այն սին յաւակնոտութիւնը, թէ այդ արարքով միայն պիտի կարենային թուրք պետութիւնը պարտութեան մատնել:

Նման որակումներ կը տկարացնեն լիզպոնեան արարքին հզորութիւնը. արարք մը, որուն յիշատակը պէտք է վառ պահենք եւ մեր աշխատանքները պէտք է ուղղենք դէպի այդ յիշատակին մշտապես պահպանուելու եւ անոնց իտեալին իրականացումը: Լիզպոնեան գործողութիւնը հայ երիտասարդութեան քաղաքականացման գերազույց արտայայտութիւնն էր եւ միաժամանակ անոր յեղափոխականացման շուրջին ապացոյցը: Եւ այդ գործողութեան թելադրականութիւնը ամենէն աւելի ուժգին է այս օրերուն, երբ անգամ մը եւս պէտք է շեշտել մեր դատի անժամանցելիութիւնը, մեր նպատակներուն ու պահանջատիրութեան արդարացիութիւնը, հայ երիտասարդութեան անսակարկ յանձնարարական անհրաժեշտութիւնը եւ գերազույց գոհաբերութեան պատրաստակամութիւնը:

Լիզպոնեան արարքը ունեցաւ այլազան եւ միաժամանակ իսկական գահաւորութիւններ: Արարքին օրերն միմիայն այսօր յաճախ շատեր ափսոսացին եւ տակաւին կ'ափսոսան «ճախող գործողութեան մը ընթացքին ի գուր գոհ գացած երիտասարդ կեանքներուն հաշուոյն»:

Նման անհեթեթ մեկնաբանութիւններ արդիւնք են թերահատ ու վախկոտ ստեղծումներու: Լիզպոնեան գոհաբերութիւնը արտատուր էր, գերմարդկային: Եւ այդ մեկնակետով, հաճոյապաշտ մարդիկ կը չեն կրնար ըմբռնել արարքին երկրորդը: Լիզպոնի մէջ դրսեւորուած նուիրականութենէն եւ անանձնականութենէն սարսփողներն են միայն, որ չեն կրնար հասկընալ Լիզպոնի տղոց գոհաբերութեան արժեքը:

Իրենց գիրքնք նման հերոսութենէ անհասանելիօրէն հեռու գագաղովներն են, որոնք իրենց աննպատակ կեանքը, կրաւորականութիւնը եւ միայն անձնական բարօրութեան մէջ հանգիստ ու ապահովութիւն տեսնելու տրամադրութիւնները արդարացնելու համար կը փորձեն ստորա-

ԲԱՐՈՉԶԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԲԱՆԻ 103ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ԳԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԼԱՅՏՆԵՐՈՒ ՅՈՒՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝

Հ.Ս.Ը.Մ. ՊՈՒՐԳ ՅԱՍՈՒՏԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Նախագահութեամբ՝

ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԱՆԻ

(Բարեջան առաջնորդ Լիբանանի Հայտոց)

Բանախօս՝

ԸՆԿ. ՇՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

● ԳԵՂԱՐՈՒԹԵԱՆԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ


Տեղի կ'ունենայ Հիւնզաբքի, 27 Յուլիս 2000, երեկոյեան ժամը 8:00ին, Ազգ. Լեւոն եւ Սոփիա Թակոբեան քոլեճի շրջապակէն ներս:

ՍՈՒՏՔԸ ԱԶԱՏ - ՀՐԱԻԷՐ

ՇԱՂԻԿ Գ. Խ.

ԼԻԶՊՈՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Չորեքշաբթի, 27 Յուլիս 1983ի առաջին ամիսի 10:30ին Հայկական Յեղափոխական Բանակի անդամ հինգ հայ երիտասարդներ՝ Սեդրակ Աճեմեան, Վաչե Տաղևաճյան, Արա Գրորձլեան, Սարգիս Աբրահամյան և Սիմոն Եահնգեան, վարձուած ինքնաշարժով մը մտան Լիզպոնի թրքական դեսպանատան դարպասէն ներս, անցան դեսպանին բնակարանը շրջապատող պարտէզը եւ կրակ բացին պահակին վրայ, որ վիրաւորուեցաւ: Սակայն ան եւ դեսպանատան գործակալին թիկնապահը հակադարձեցին եւ յաջողեցան փակել դեսպանատան շէնքին դուռը: Այս բախումին ընթացքին անհատակուեցաւ անձնասպանական խմբակի մարտիկներէն մէկը՝ Սիմոն Եահնգեանը, երբ թիկնապահին արձակած փամփուռները զգետնեցին զինքը: սակայն անձնագործութեան ուխտով դեսպանատան գրասենյակը անխաճեռած չորս մարտիկները յաջողեցան գրասենյակը դեսպանին բնակարանը, ուր կը գտնուէին դեսպանին կինն ու զուակը: Դեսպանը Լիզպոն չէր գտնուէր: Կրտսերները մտնելու 15 վայրկեան ետք, ժամը 11:30ին, կը լսուի առաջին պայթումը, որուն կը յաջորդէ երկրորդ գորտար պայթումը՝ ժամը 11:30ին: Անձնասպանական խմբակը անմիջապէս հեռանալու ճանապարհը հաղորդակցութիւն կը հաստատէ ոստիկանութեան հետ եւ կը զգուշացնէ վերջ տալ միջատութեան փորձերուն: Լիզպոնի մարտիկները կը սպասուան ուրբահարել շէնքը, եթէ այդ միջատութիւնները անմիջապէս չհաղորդուին:



«ԱՅՓ» եւ Լիզպոնի «ԼԻՅ. Փի.» լրատու գրասենյակները եւ Լիզպոնի հրատարակչական «Տիարո Տէ Նարթիսիս» օրաթերթին խմբագրութիւնը:

Հաղորդագրութիւններէն մէկուն կցուած էր խմբակին անդամներուն հինգին լուսանկարները եւ անուանացանկը. նաեւ՝ գրութիւն մը, որ կ'ըսէր. թէ այս տղոց դէմքերը պէտք է քանդակուին իւրաքանչիւր հայու յիշողութեան մէջ: Հաղորդագրութիւնը նաեւ կը յայտարարէր, որ «անոնք ոճրագործներ չեն, այլ՝ ազգային արդար դատի գինուորակներ»: Լիզպոնի մարտիկները, թէ այս գործողութիւնը «արտայայտութիւն մըն է զայրոյթին» երիտասարդութեան, որ յոգնած է եւ ընդվզած իր Կատին հանդէպ միջազգային անտարբերութեան: Հաղորդագրութիւնը նաեւ կը յայտնէր, թէ գործողութիւնը ուղղուած չէ Փորթուգալի դէմ, այլ՝ Թուրքոյ: Հետեւաբար կտրուկ կերպով կը զգուշացներ փորթուգալական ոստիկանութեան մինչեւ 48 ժամ չմիջամտել, չվտանգելու համար պատանդներուն կեանքը եւ մտանկալ շէնքը: Այս հաղորդագրութեան եւ վարձուած երկու ինքնաշարժներու մէջ գտնուած զինամթերքի եւ ուտեստեղէնի պաշարէն մէկն էր վրայ ոստիկանութիւնը եզրակացուց, որ գործողութիւնը անխատեսուած էր երկար տևողութեան համար:

Երկրորդ հաղորդագրութիւնը կը շեշտէր, թէ Չ. Բանակը ոչ մէկ կապ ունի այլ խմբակներու եւ կազմակերպութիւններու հետ: Ան կը յայտնէր, թէ իր մարտավարութիւնը մտնելու Հայկական Յեղափոխութեան Արդարութեան Մարտիկներու մարտավարութեան: Վերջապէս, հաղորդագրութիւնը կոչ կ'ուղղէր հայկական ահաբեկչական այլ խմբակներուն, որ միանան պայքարի իր ճամբուն:

Երրորդ հաղորդագրութիւնը կը ներկայացնէ Չ. Բանակի պահանջները եւ կը պարզէր Հայկական Հարձակման մարտամասնութիւնները, նաեւ կը պահանջէր Թուրքիայէն՝ ճանջնալ Հայ Կատը եւ հատուցում կատարել պահանջատէր հայ ժողովուրդին:

Կործողութեան ետք փորթուգալական ոստիկանութիւնը իր կատարած քննութիւններուն լույսին տակ յայտարարեց, թէ հինգ անձնուրացները կը կրէին լիբանանեան անցագիր, թէ՛ անոնցմէ մէկուն անցագրին ժամանակը վերջացած էր Մարտին, թէ՛ անոնք քանի մը օր առաջ ժամանած էին Լիզպոն եւ հետադարձաբար միջոցով ապահոված պանդուկին իրենց սենյակները: Ազատութեան Բազմաբնակ ողջակէզներուն աճուցանելու 20 Սեպտեմբեր 1983ին հանգչեցան հայրենի հողէն հեռու, Լիբանանի կապույտ երկինքին տակ:

«ՄԵՆՔ ԿԸ ՀԱԻԱՏԱՆՔ ՄԵՐ ԳՈՐԾԻՆ»

ՎԱՉԷ. Մենք ծրագրած ենք այս գործողութիւնը, որովհետեւ վախճուելու տարիքի ի վեր Հասած ենք այն եզրակացութեան, որ ո'չ շատ կը խօսին խաղաղութեան մասին, գործնական գեղեցիկ վրայ այդ մէկը կ'ընէ: 20րդ դարու առաջին ցեղասպանութեամբ

որ իմ ընկերներս, որոնք ինծի Հետ մեծցած են, նոյն միջավայրին մէջ մեծցած են, նոյն տեղերը յաճախած ենք, նոյն գործերը րրած ենք, Համոզուին այս մէկ

Դո՛ւք ձեր կամքին տէր եղէք: (...) Մենք առաջինները չենք, որ կը քայլենք: Մեզմէլ առաջ շատեր քայլած են եւ կը լուստամ, որ մեզմէլ աւելի լուստամ պիտի գտնուին: Ես շատ ուրախ եմ եւ շատ լաւ կը հաւատամ, որ այդ մէկը պիտի ըլլայ: (...) Պիտի ըսեմ, որ մենք այս պայքարին մէջ յայտնաբերուինք:



կէտին եւ չըսեն ընտանիքը, կեանքը, ապագան: Առանց Հայրենիքի, առանց մեր հողերուն ո'չ ապագայ կայ, ո'չ կեանք կայ, ո'չ ընտանիք կ'ըլլայ: Առանց մայր հողին, առանց մայր ազգին, (...) ոեւէլ պատիկ ընտանիք գոյութիւն չ'ունենար: Ես առողջ կը հաւատամ եւ կ'ուզեմ, որ ընկերներս մտածեն իրենց հողերուն մասին:

ՍԻՄՈՆ. Ծառ Հպարտ եմ, որ Հայ ծնած եմ, որովհետեւ Հայ պիտի մեռնիմ: Ծառ ուրախ եմ այս գործողութեամբ: (...) Հիմա մեր ապրած կեանքը իսկապէս որ կեանքէլ գատ ամէն ինչի կը նմանի: Կ'ապրինք ուրիշին տիրապետութեան տակ. ուրիշին խամաճիկներն ենք: (...) Երիտասարդութեան կ'ուզեմ ըսել, թէ նախ շատ անտարբեր են: Երկրորդ՝ իրենց նուագագոյն եւ ջակցութիւնը կամ քաջախիւսներ չեն բերուին:

բաւական նեղութեան մէջ ենք, բայց գոնէ մեր գլուխները վեր են: Երբեք ո'չ ծունկի եկած ենք, ոչ այլ մեր գլուխները կախ եղած են: Մենք մեռած ենք մեր գլուխները վեր: Մենք այսպիսով պիտի մեռնինք, մենք այս գործին կը հաւատանք: Այս մէկը յաջող պիտի ըլլայ եւ ստիկա թուրքերը գանկը պիտի փչրէ: Ասիկա պիտի ըլլայ չենք, ազգէլ քանի մը հոգիներ ենք: Հոն ազգ մը սէր կ'ուզէ, գոհացութիւն կ'ուզէ: Այնպէս, որ աւելի Հեռու թող մտածեն:

ՍԱՐԳԻՍ. Մեզի Համար արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ



մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ



պարտք կը գանք: Այն ֆետայիները, որոնք կը կրունկին Հայրենիքի Համար, մեզի շնորհած են այն շնորհքը, որով մենք շարունակենք մեր ֆետայիներու ճամբան: Մենք պիտի չապրենք, որ ոեւէլ ազգ ունի իր հողամասը, իր երկիրը: Ինչո՞ւ Հայր պիտի չունենայ: Մեր երկիրը իրենց արուած է թուրքերուն ձեռքով: Հայրենիքը չի տրուիր, այլ գոնէ կ'առնեն, եթէլ արիւն թափենք: (...) գոհտաս: Հայու ստոր պայ, բան չեն ընեն: Ես պիտի ըսեմ, թէ իրենց լաւագոյնը ընեն, որովհետեւ գործ չի պակսիր: Պատիկ մենք գործեր չկան, այլ լաւ եւ գէշ գործեր: Ես կը հաւատամ, որ մերը լաւ գործ է:

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

ԱՐԱ. (...) Ես չեմ հաւատար, որ ազատութիւն կրնայ ըլլալ առանց արիւն թափելու կամ գոհուելու: (...) Ես կը հաւատամ միայն խարուիք: Դո՛ւք ձեր սրտերը գործաւոր պահեցէք:

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

մեր արդէն յեղափոխութիւնը սկսած է եւ անկախութեան ամպերը կ'ուզան: Հայրենիքի Համար պէտք է արիւն թափենք, որովհետեւ մենք մեր վրայ

ԱՆՆԱԽՆԸՆԹԱՅ ՊԱՏԱՐԱԳ

Մահաբոյր մթնոլորտ...
Ճնշիչ օդ...
Կսկիծ սրտերուն...
Արցունք մայրերու աչքերուն...:

Տերգօրեան անպատիւն կիզիչ արեւուն՝
Անթաղ մնացած նուիրական օրհնելի նշխարներուն
Եւ կեղծ յիշատակը ոգեկոչող, սրբացնող
Անճախընթաց պատարագն էր մատուցուած...:

Երկուշաբթի, 27 Յուլիս 1983:

Ղօղանքները բթաբեր եկեղեցիներուն հայկական,
Տխրահունց կանցով կը գուժեն,

Հնգեակ «Զանգակներուն անլուխ»

Լռութիւնը ի սպաս...:

Բայց մահ չէ՛ այս, ո՛չ, ո՛չ, յաւերժ ոչ...
Խորհրդաւոր ուժ մըն է, «աստուածները
զարմացնող»,
Մեծաշնորհը հայ «խնթ»երուն, խիզախ, խրոխտ,
Ժպտաղէմ, գիտակցօրէն մահը գրկել բաց սրտով,
Զայն հեգնել, արհամարհել, դողացնել,
Անմահութիւն կերտել է՛, սքանչացման,
խոնարհութեան արժանի:

Յանուն Ձեր տառապել ազգի, ժողովուրդի,
հայրենիքի,
Դո՛ւք վճռեցիք նուիրական օրհանք Ձեր,
Ծեփորեցիք սրբազան պատմաբան Հայկեան ցեղի-
Դուք անմահ, լուսապսակ ռահվիրաներ:
«Թէ ամենայն տեղ մահը մի է...
ազատութեան կը գորուի»...

Ծեփորեցիք ռազմերգը, ոգեկոչելով ազգը կանգուն,
Դուք անձնագործ նուիրելու,
Ազատութեան Բագինին,

Վառ աչքերէն Ձեր, ժայթքեցաւ կրակ ու հուր,
շանթ ու կայծակ,
Բորբ սրտերէն՝ անմահ քայլերը ողջ հայուն...
Պատգամ մեզ ամէնուս...
Մահ կամ Ազատութիւն...:

Հայ ազգն էր քանդակուած հոգիներուն՝ Ձեր անբիծ,
Հայ անունը փորագրուած սրտերուն՝ Ձեր անարատ,
Հայաստանն էր կենդանի մտքերուն՝ Ձեր
սաւառնող,
ժողովուրդի իրաւունք, ազատութեան տեսիլը Ձեր
վարդաթոյր:


Յեղափոխութեան վառ քուրայի, բռուցքն էիք
գուպարի,
Արիստիտ կորիւններ խոյանքովն Ձեր կատաղի,
Ձեզ ծնողը մատակ առիծ Ծաբէներու հայելի,
Օրհնելով ըլլան ծնողները տառապած
Հայկեան ցեղի:

Քալեցիք Դուք սուրբ ճամբէն, վսեմ ուխտը
Ձեր սրտին,
Նուիրական առաքելներ, տեսլապաշտներ խնկելի՛
Խօսուն խորաններ յաւերժ օրհնելու, այլ եւ
յաւէտ պաշտելի,
Յարգանք Ձեզի, բիւր նուիրում, Ձեր անթառամ
յիշատակին:

Ընդունեցէք անպաճոյճ խօսքերս այս, որպէս՝
Ափ մը հող Ձեր անթառամ շիրիմներուն, որպէս՝
Փուճը մը ծաղիկ հողակոյտերուն միջտ դալար,
որպէս՝

Յարգանքի տուրք խնկելի յիշատակին Ձեր
անձիջելի...:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի



Կոոչական

ԱՄՐԱՆ ՊԱՏՈՒՀԱՍՆԵՐԷՆ՝ ՄԺԵՂԸ

ԱՒԵԼԻ ԲԱՆ 2,500 ՏԵԱԿ

Աշխարհի չորս ծագերուն հայածուած միջատ մըն է մժեղը: Ոչ ոք կը հանդուրժէ անոր անհաճոյ վզգոցը եւ ոչ ոք կ'ախորժի անոր պատճառած անախորժ քերուր-տուփէն:

Դիւրին չէ այս միջատին ձերբազատուիլը, հակառակ որ ամբողջ մարդկութիւնը կը հարած է գայն: Միմիայն Հնդկաստանի մէջ ժային կոչուած փոքրիկ համայնքի մը անդամները կ'ուրարէն կը պաշտեն հայիւ 2,5 միլիարդ մ կշռող եւ առաւելագոյնը 55 օր ապրող այս միջատը:

Բացի իր անհաճոյ վզգոցէն եւ պատճառած քերուր-տուփէն, մժեղը նաեւ համաճարակներ կը տարածէ Ափրիկէի եւ Ասիոյ մէջ:

Այս անտանային միջատներուն ոչնչացումը դիւրին չէ, քանի որ անոնք դիւրաւ կը վարժուին միջատասպան դեղերուն եւ շատ արագ կը բազմանան:

Աշխարհի չորս կողմերը կան 2,500 - 3,000 մժեղի տեսակներ:

ԷԳ ՄժԵՂԸ ԿԸ ԽԱՅԹԷ

Գիտնականները էգ մժեղներով հետաքրքրուած են, քանի որ անոնք են, որ կը խայթեն: Անոնց ծծած արիւնը կենսական է անոնց վերարտադրութեան համար:

Զափագանց շարժուն այս միջատը ժամական 2 քիլոմետր արագութեամբ կը շարժուի մինչեւ 100 քիլոմետր ճամբայ կտրել իր որսը ընտրելու համար:

Շատ տոկոսն այս միջատը գոյութիւն ունի աշխարհի չորս կողմը, սկսած Ժոզեֆինէն հասնելով մինչեւ 3 հազար մետր բարձունքներուն վրայ:

ՀՆԱՅՆԵԼՈՒ ՍԻՋՈՅՆԵՐ

Կ'ըսուի, որ երբ քանի մը հոգիով նստած ենք, յաճախ մէկ հոգի շատ աւելի կը խայթուի, քան միւսները, որովհետեւ ան «յարմարագոյն» այն անձն է, որուն մորթը միւսներէն աւելի խոնաւ է եւ աւելի ընթացական կազմ կ'արտադրէ:

Կ'ըսուի նաեւ, թէ մժեղները շատ չեն գնահատեր ՊԵ. 1 եւ ՍԷ. կենսանիւթերով հարուստ արիւնները:

Մժեղներէն պաշտպանուելու կամ գանոնք հեռացնելու համար:

- Կրնանք դիմել միջատասպան սփրէյներու, ելեկտրական գործիքներու վրայ գետեղուող դեղերու եւ այլն:
- Մժեղասպան դեղերու բացակայութեան, կրնանք



Մժեղարգել՝ մժեղներէն պաշտպանուելու բնական միջոց մը:

- մենք մեզ պաշտպանել մժեղարգելով:
- Կրնանք ելեկտրական հոփահար աշխատանքի գանոնք փայտեղէնով համար:
- Պէտք է օրուան ընթացքին յաճախ մաքրուինք, քանի որ անոնք կ'ախորժին քրտինքին հոտէն:
- Պէտք է խուսափինք անուշահոտերէն եւ հաճելի բոյրով սերերէն, որոնցմէ կ'ախորժին մժեղները:
- Երեկոյան հագնելիք երկար թելով հագուստներ եւ մեր ոտքերը պաշտպանենք տարատ հագնելով:
- Մեր մարմինը օճենք կիսուած նարինջի կամ կիտրոնի շերտով մը, մժեղները երբեք չեն ախորժիր անոնց հոտէն:
- Մեր մօտ գետեղենք մեխակի կամ յաւանտի փունջերը, որոնցմէ կ'արձեւալ չեն ախորժիր մժեղները:
- Վերջապէս, բաց պնակներու մէջ յոյիկ շերտներ եւ քանի մը տեղ գետեղենք, մժեղները փայտեղէնով համար:

ԽԱՅԹՈՒԵԼՈՒ ՊԱՐԱՊԱՅԻՆ



Եղունգով լքերէն որիւն խայթուածը:

- Ինչ որն էլ ծանր խայթուածքի պարագային -
- Խայթուած րափինը լուրջ օճառով եւ ջուրով:
- Բամպակին վրայ քացախ դնել եւ խայթուածքը շփել, ապա բամպակը նորոգել եւ խայթուածքին վրայ ձգել:
- Մանր խայթուածքներու պարագային դեղարանէն յատուկ սեր եւ դեղ գնել ու անմիջապէս գործածութեան անցնել:
- Տաքութեան, գլխացաւի, մարտդական խանգարումներու պարագային անմիջապէս րփռելի դիմել:

ՀԱՄՔԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ
HAMPIG SASSOUNIAN C - 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ԶՈՒՐԻՆ ՄԱՍԻՆ

Օրական 3 լիթր ջուր կը կորսնցնենք շնչառութեան, քրտինքի եւ այլ արտաքսուսներու ճամբով: Մեր մարմինը օրական 0,6 լիթր ջուր կ'արտադրէ, իսկ ուտելիքները միջին հաշուով մէկ լիթր ջուր կը հայթայթեն մարմնին: Ուրեմն մեզի կը մնայ մէկուկէս լիթր հեղուկ խմել եւ երբեմն մոյնիսկ աւելի, երբ օդը շատ տաք է կամ շատ քրտնող ենք:

Այժմ տեսնենք, թէ ինչ գիտք ջուրին մասին...

ԻՆՉ Է ՏԱՐԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՂԲԵՐԻ ԶՈՒՐԻՆ ԵՒ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՈՒՐԻՆ

Երկուքն ալ ստորերկրեայ ծագում ունին, ընկալել են իրենց բնական վիճակին մէջ եւ քիմիական նիւթերը գերծ են: Տարբերութիւնը այն է, որ առաջինը մոյնքան հարուստ է հանքային աղերով եւ օլիկո-լիւլեմաններով, որքան երկրորդը: Գիտենք նաեւ թէ այս վերջինները որքան անհրաժեշտ են մեր առողջութեան:

ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆԸ ԳԻՐԱՅՆՈՂ ԶՈՒՐԵՐ ԿԱՆ

Եթէ մարսողական հարցեր ունիք. նախընտրելի է, որ ճաշի ընթացքին առատորէն ջուր չխմէք, քանի որ մարսողութեան ընթացքը կը դանդաղի: Սակայն պիջարպոնաթով հարուստ ջուրերը կ'աչխուսուան մարսողութեան հոլովոյթը: Ֆրանսական ուսումնասիրութեան մը համաձայն, ճաշէն ետք 150 միլիլիթր պիջարպոնաթով հարուստ ջուր խմելը կը կանխարգիլէ ստամոքսի քրտնութիւնը եւ այլ անախորժ զգացումներ:

ՔՍՐ ԿԱՄ ԱԵԱՉ ՈՒՆԵՅՈՎՆԵՐԸ ՊԷՏԷ ՀՐԱՄԱՐԻՆ ԿԻՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԶՈՒՐԵՐԸ

Երկար ատեն մարդիկ այս համոզումը ունէին, մինչդեռ իրականութիւնը հակառակն է... Ուր ուսումնասիրութիւններու համաձայն, որքան քիչ խմենք կիրով աղքատ ջուր, այնքան մեր ուտելիքներէն ստացւած թթու նիւթերը մեզին մէջ անցնելով կը նպաստեն քարերու կազմութեան: Դեռ քարերը կը թելադրուի առնուազմ երկու լիթր ջուր խմել այդ քարերու գոյա-



ցումը կանխարգիլելու համար:

ԶՈՒՐԻՆ ԿԵՐԸ ԿԱԹՆԵՂԵՆՆԵՐՈՒՆ ԿԵՐԸ ՀԱՄԱԶՕՐ Է

Այո, ջուրին պարունակած կիրը մոյնքան լաւ կ'իրացուի մեր մարմնին կողմէ, որքան կ'աքնդեղնինք: Դեռ քարերը թէ փոքրուրէն եւ թէ մեծերուրէն թելադրելի է կիրով հարուստ ջուր խմել, ոսկորներու առողջութեան համար: Տարբերութիւնը կիրով հարուստ ջուր խմելով կրնան պայքարիլ օսթոփոքրոզին դէմ:

ԶՈՒՐԻՆ ՊԱՐՈՒՆԱԿԱԾ ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՍԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ

Վերջնական կարծիքներ չկան: Տակաւիճ կատարուող ուսումնասիրութիւնները կը քննեն հանքայիններուն դերը սրտի երակներու



խցման պարագային: Առայժմ գիտենք, թէ որքան ջուրը հարուստ ըլլայ մակնեգործով, այնքան արտադրուող կը թելադրուի լուրջ վտանգը կը նուազի (անխմել այդ քարերու գոյա-

ազդակներ կրնան ժխտել այս հաստատումը):

Միւս կողմէ, սրտանօթային, արեան շրջագալութեան եւ արեան գերճնշումի հարցեր ունեցողները պետք է խուսափին ստորինով հարուստ ջուր խմել:

ԶՈՒՐԻՆ ՊԱՐՈՒՆԱԿԱԾ ՏԼԻԲՕՐԸ ԿԻ ՊԱՅՔԱՐԻ ԱՎՈՒՅԻ ՓՏԱՆՏԻՆ ԳԵՄ

Անշուշտ, բայց չչափազանց ենք: Այն երեխաները, որոնք օրական մէկն մէկուկէս լիթր 0,7 միլիլիթր ֆլիւոր պարունակող ջուր կը խմեն, իրենց ականներու փտախտին դէմ գործածած ֆլիւորի դեղահատերը կրնան ջնջել: Զափագանցուած ֆլիւորը կը վնասէ ականներուն տնային եւ ճերմակ արտանքը կը ձգտանք վրայ:

ԶՈՒՐԻՆ ՄԱԿՆԵՉՔՈՍԸ ԼԱՒԱՊԷՍ ԿԻՐԱՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՐՄԵՆ ԿՈՂՄԷ

Այո, ան մոյնքան լաւ կ'իրացուի, որքան դեղահատերուն: Դեռ քարերը մակնեգործով հարուստ ջուրի հետեւողական սպառումը կը պայքարի սթրէսի, յոգնութեան եւ սնանկութեան անհանգստութիւններու դէմ:

ԵՐԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԻՆՉ ԶՈՒՐ ԽՄՏՆԵԼ

Թելադրելի է երեխաները խմեն շատ այնքան չափարանակող ջուրեր, չծանրաբեռնելու համար անոնց երկակմային դրութիւնը, որ տակաւին շատ ճուրղակ եւ զգայուն կ'ըլլայ: Նաեւ թելադրելի է, որ անոնք ծորակի ջուր չխմեն որով շրջան մը աղիքային խանգարումներ չունենան լուրջ համար:

ԼՈՒՍԱՒՈՐ ԳԱՐԱՓՈՐՆԵՐ

ԲՈՅՍԵՐՈՒ ԽՆՏԵՐԸ


Եթէ քանի մը օրով տունէն պիտի բացակայիք եւ մէկը չունիք, որ ձեր բոյսերուն հոգ տանի, գանոնք




Գոյգ-գոյգ խմբեցէք, անոնց քով գետեղեցէք ջուրով լեցուցու խորունկ աման մը, ապա առէք երկու կտոր բաւական երկար վիրակապ կամ որեւէ այլ կտոր եւ մէկ ծայրը գետեղեցէք ամանի մէջ, միւսը թաղարին: Այսպէսով թաղարին հողը խոնաւ կը մնայ եւ ձեր բոյսը չի չորնար:

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԵՏԱՅՔՆԵՐԸ ԳՊԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մէկուկէս լիթրոնց հանքային ջուրի պարագայ շիջ մը կ'էսէ կտրեցէք:



Պէտք ունիք նաեւ պահածոյի պարագայ, մաքուր տուփի մը եւ վերջապէս՝ որեւէ սփրէյի կերպարակալ լաւ կ'ախորժի: Իւրաքանչիւրը ամուր իսկո՞վ փակցուցէք



Նախապէս ներկուած տախտակի կտորի մը վրայ: Զորնային ետք գանոնք ներկեցէք ձեր նախասիրած գոյններով եւ մէկը դասաւորեցէք ձեր գրեկական պիտոյքները:

ԿՅՈՒՄ ԳՐԱՎԵՆԵՐ

Եթէ ձեր փոքրիկին գրասեղանին դարակները կոկիկ չեն եւ մատիտներն ու այլ գրեկական պիտոյքներ խճողած են գանոնք, դիմեցէք հետեւեայ հնարին: Առէք դ գալ, դ անակ, պատառաքաղները դասաւորելու ծառայող, բաժանումներով օժտուած տուփ մը եւ իւրաքանչիւր բաժանումի մէջ դասաւորեցէք ձեր փոքրիկին գունաւոր ներկերը, գրիչները, ԿՅՈՒՄ ԳՐԱՎԵՆԵՐ, խճերիկները (սքոչքէլի), եւ այլն: Ի հարկին գնեցէք քանի մը տուփ, եթէ ձեր փոքրիկը թէ՛ թաղիք ներկ եւ թէ՛ փայտէ գունաւոր ներկեր ունի:

Պապրասպեց
ԳՈՒՐԵԿ ՄԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ԷՖԵՆՊԵՐԿ ԿԸ ՄԵՐԺԷ ՎԵՕԼԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Պայերն Միլնիիի միջնապահ եւ իւրապետ Շթեֆան Էֆենպերկ երկիր կատարած հարցազրույցին ընթացքին մերժեց Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ Բուտի Վեյլըրի առաջարկը, յայտնելով, որ կը մերժէ միջազգային ասպարէզ վերադառնալ:

«Գերմանիա միջազգային իր յառաջիկայ մրցումները պիտի կատարէ առանց Էֆենպերկի: Հետեւաբար այդ ուղղութեամբ խօսիլը անիմաստ է այլեւս. չեմ ուզեր կրել ազգային խումբին շապիկը», կ'ըսէ 31 տարեկան Էֆենպերկի Ֆրիտցօլտեն, ուր անոր ակումբը՝ Պայերն Միլնի կը կատարէ իր փորձերը, պատրաստուելու համար 2000-2001 եղանակին:

Էֆենպերկ, որ 35 անգամ կրած է Գերմանիոյ շապիկը, 1994ի Մոնտիալին վտարուած էր ազգային խումբին պատասխանատուներուն կողմէ, իր ոչ մարզավայել մէկ արարքին համար: Հակառակ անոր, որ ան 1998ին վերադարձած էր միջազգային ասպարէզ, սակայն երկու մրցում կատարելով, դարձաւ հեռացած էր ազգային խումբէն:

Հակառակ Էֆենպերկի այս յայտարարութեան, անոր մարզիչը՝ Օքսլար Հիցֆէլտ վերջերս յայտարարած էր ըսելով, որ ան կը մնայ աշխարհի լաւագոյն միջնապահներէն մէկը:

●ԳԵՐՄԱՆԻՈՅ ֆուտբոլի ֆետերասիոնը երէկ յայտարարեց, թէ ֆետերասիոնին նախագահը՝ Էլիտիուս Պրաուն, որ այս ամսուան սկիզբը ենթարկուած էր սրտի վիրաբուժութեան, բաւական ասպքիւնած է:

Ֆետերասիոնին կողմէ կատարուած հաղորդագրութիւնը կ'ըսէ, թէ 75 տարեկան Պրաուն, թէւէ դուրս եկած է յատուկ հսկողութեան սենեակէն, սակայն շատ հաւանաբար տակաւին մինչեւ շաբաթավերջ մնայ Լայպցիգի հիւանդանոցին մէջ:

●ԳԵՐՄԱՆԻՈՅ վարչապետ Կերհարտ Շրեօտըր երէկ «Պիլտ» մարզական շաբաթաթերթին հետ իր ունեցած հարցազրույցին ընթացքին շեշտեց երիտասարդ մարզիկներուն ուշադրութիւն դարձնելու անհրաժեշտութիւնը, որպէս իր անունը ազգային դառնան Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին յաջողութեան բանալին:

Ան ըսաւ, թէ Պունտրիկայի բոլոր ակումբները երբեք պիտէ չէ անտեսել եւ պահեստի նստասեաններուն վրայ ձգել անփորձ մարզիկները, որպիսեւս այդ մէկը պատճառ կը դառնայ, որ անոնք ոչ միայն փորձառութիւն ձեռք չձգեն, այլեւ «ֆուտբոլի խաղալիքն ալ մոռնան»...

Անդրադառնալով 2002ի Մոնտիալին, Շրեօտըր յայտարարեց, թէ ինք մեծ վստահութիւն ունի մարզիչ Բուտի Վեյլըրի վրայ, որ իր կապը պիտի հասցնէ ձախիտ...

ՓՈՒՍ ԱՆՅՈՒՄ ՆԵՐՈՒ «ՍԱԿԱՐԱՆ»ԷՆ...

●ՊԱՅԻՐ ԼԵՒԵՐՔՈՒԶԸՆԻ պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ իրենց ակումբին պարագիցի միջնապահ Քրիստիան Բոնիստի կ'ընկերակցէր Կ. Էս. Բոնիստի, հակառակ անոր, որ ան մինչեւ 2002 պայմանագրութիւն մը ստորագրած է իրենց հետ:

24 տարեկան Էս. Բոնիստին 2005 պայմանագրութիւն մը ստորագրեց Կ. Էս. Բոնիստի հետ, այսպիսով կը դառնայ երկրորդ կարգու մարզիկը, որ կը միանայ իտալական կազմին: Անցեալ Մայիսին արժանաբար յառաջապահ Կարստի Պաթիսթուսի լքելով Ֆիորենտինան, միացած էր Կ. Էս. Բոնիստի:

Ըստ իտալական մամուլին, անոր փոխանցման համար Կ. Էս. Բոնիստի գերմանական կազմին պիտի վճարէ 19 միլիոն տոլար:

Այսպիսով, անոր փոխանցումով Լեւրքուզըն Գերմանիոյ մէջ մարզիկներու փոխանցման սակարանին մէջ նոր մրցանիչ մը կը հաստատէ: Նախագիտ (1998ին) Գերմանացի միջնապահ Եոնի Հայնրիչ մրցանիչ մը հաստատած էր, Պորտուգալացի Եոնի Հայնրիչին իր փոխանցումով: Այս ամիս, սակայն, Հայնրիչ վերադարձաւ Տորթմոնտ:

1997ին կարգադիական Կրեմիս խումբին Լեւրքուզընի միացած էր Բոնիստին իր ակումբին շապիկը կրած է 82 անգամ, անոր հետ նշանակելով 11 կոլ:

●ԻՏԱԼԱՅԻ Փաուլօ Վանուի երէկ Փարմայէն փոխանցեցաւ Ֆիորենտինայի, յայտնեցին վերջինի պատասխանատուները, առանց նշելու սակայն անոր փոխանցման գումարը: Անոնք պարագայէս ըսին, թէ ան չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց իրենց կազմին հետ:

Այսպիսով, Ֆիորենտինայի միանալով, ան կը փոխարինէ գերմանացի Եոնի Հայնրիչը, որ վերջերս վերադարձաւ իր նախկին կազմին՝ Ֆիորենտինային:

27 տարեկան Վանուի, որ նախապէս մաս կազմած է Վենետիկի եւ վերոնաջի, անալիս անգամ իտալիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը կրած է անցեալ Նոյեմբերին՝ Պելմիլիայի դէմ բարեկամական մրցումին ընթացքին, որ վերջ գտած էր անոր կազմին պարտութեամբ (3-1): Հակառակ այդ մրցումին իր նշանակած սքանչելի կոլին, ան այդ մրցումէն վերջ նկատի չառնուցեցաւ ազգային խումբին մէջ:

●ՓԵՐՍՈՒՃԻԱՅԻ միջնապահ Ռէնաթթօ Օլիվէ երէկ միացաւ Պորտուգալի:

Միջնապահ Ռէնաթթօ, որ 1998ին իր կազմին Բ. դասակարգէն Ա. դասակարգ բարձրանալու կարելու մարզիկներէն մէկն էր, վերջին երկու եղանակներուն ալ կրցաւ մեծապէս նպաստել իր կազմին արձանագրած յաջողութիւններուն:

Պորտուգալ, որ հաստատեց անոր չորս տարուան պայմանագրութիւնը ստորագրելով, վերջերս իր կազմին միացուցած էր ճնշունգով պարագիցի պելմիլիայի միջնապահ իր նախկին մարզիկ Լուիս Օլիվէյրան՝ ֆայլաբիլէն:

2002ի ՄՈՆԹԻԱՅԻ ԶՏՈՒՄ ԵՐՅԱՇԽԱՐՀ (ԱՍՏԻ ԱՍԵՐԻԿԱՆ ԳՕՏԻ)

ՔՈԼՈՍՊԻԱ ԵՒ ԶԻԼԻ ԲԱՒԱԿԱՆ ԼԱՒ ԸՆԹԱՅԷՒ ՄԷՋ

Չիլի եւ Քոլոմպիա ստար դաշտերու վրայ յաջողեցան արժէքաւոր կէտեր ձեռք ձգել Հարաւային Ամերիկայի գոտիէն ներս 2002ի Մոնտիալի գոտումի մրցումներուն գծով:

Քոլոմպիա 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց էքուատորի հետ, Քուլիմպի մէջ, ուր հիւրընկալ կազմը եղաւ ամբողջ մրցումին ընթացքին տիրապետող, իսկ Չիլի 2-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Սան Քրիսթոպալէն, պարտութեան մատնելով Վենեզուելային: Հակառակ անոր, որ հիւրընկալ կազմը ինք եղաւ դաշտին տէրն ու տիրակաւոր, սակայն վերջին քսան վայրկեանին Չիլի յաջողեցաւ երկու կոլ նշանակել եւ արձանագրել մրցաշարքի իր երկրորդ յաղթանակը, երբ պարտութիւն կրելէ եւ մէկ հաւասարութիւն արձանագրելէ ետք:

Չիլիի կոլերը նշանակեցին Հեքթոր Թափիայ (70րդ) եւ Վեթերան յառաջապահ Իվան Սամորանօ (90րդ): Նախապէս, 10րդ վայրկեանին, Վենեզուելայի յարկաւորները ինքիւրեք ժողովրդական Անճելուզի յաջողած էր գսպել Չամորանօյի հարձած փնեայթին:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Չիլի յաջողեցաւ գրաւել Երդ դիրքը կալիֆորնիայի շնորհիւ գերազանցելով էքուատորը, որ ձախողեցաւ իր դաշտին վրայ պարտութեան մատնել Քոլոմպիան, 43 հազար համակիրներու ներկայութեան:

Քոլոմպիա, սակայն, իր արձանագրած այս հաւասարութիւնը գլխաւորաբար կը պարտի իր բերդապահին՝ Օսքար Քորտուպայի, որ րացաւ իր մրցումը կատարեց եւ հակառակ հիւրընկալ կազմին կողմէ րանցուած ճնշումին, յաջողեցաւ անտիկ պահել իր բերդը:

Մոնտիալի արժանաբար Արիել Կրազիանի չաջողեցաւ իրեն ներկայացած կոլի երկու ստողը ընկնելու սպտուկ եւ անոր կազմը՝ էքուատոր արձանագրեց մրցաշարքի իր առաջին հաւասարութիւնը, երբ պարտութիւն կրելէ եւ երկու յաղթանակ արձանագրելէ ետք:

էքուատորի խմբագետ եւ փլեյմէյքըր Ալեքս Ալուինա կը իր կարգին յաջող մրցում մը ունեցաւ եւ կրցաւ ինքզինք պարտադրել գոտիին կեցողները:

ԱՅՍՈՐ ՊՐԱՍԻՎ - ԱՐՄԱՆՍԻՆ

Այսօր տեղի կ'ունենայ Հարաւային Ամերիկայի գոտիէն ներս սպասուած գազաթի ճակատումը Պրագիլի եւ Արժանաբարի միջեւ, Ռիօ տը ժանէյրոյի մէջ:

Մրցումը պիտի ըլլայ կարեւոր, նախ, որովհետեւ առաջին անգամ ըլլալով է, որ երկու կազմերը իրարու դէմ կը մրցին Մոնտիալի գոտումի մրցումներուն ընթացքին, ապա որովհետեւ մարզիչ Ռաուլոյի Լուիս-Սեմպուրկոյի կազմին համար յաղթանակը պիտի ըլլայ շատ կարեւոր, այսպէս զօրակար թէ ան մնայ իր պաշտօնին վրայ:

Լիւքսեմպուրկօ դաշտ պիտի ներկայացնէ յետագայէն Անթոնիօ Քարլոս եւ միջնապահ էմերսոն Ֆերանդիս, որոնք անցեալ շաբաթ Փարաիկայի դէմ Պրագիլի կրած պարտութեան (2-1) ընթացքին ներկայ էին եղած կախակայւած ըլլալով:



Չիլիի խմբագետ Իվան Սամորանօ, որ Գ2անակեց իր կազմին երկրորդ կոլը

Շատ հաւանաբար Անթոնիօ Քարլոս ըլլալ խումբին խմբագետը, նկատի ունենալով, որ Քաֆու Փարաիկայի դէմ մրցումին կախակայուած ըլլալով պիտի րացակայի այս շատ կարեւոր եւ ճակատագրական հանդիպումին:

Եթէ պատահի, որ Պրագիլ պարտութիւն մը կրէ, մարզիչ Լիւքսեմպուրկօ կրնայ կորսնցնել իր պաշտօնը, սակայն այս մէկը չի նշանակել, որ Պրագիլ չի կրնար հասնիլ ձախիտի եւ Հարաւային Քոլումբիայի մէջ

Երկուան մրցումներէն ետք, դասաւորումը այժմ կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

	ՎԷՏ
1.- Արժանաբար	15 (14-2)
2.- Ուրուկուէյ	10 (7-4)
3.- Քոլոմպիա	9 (6-4)
4.- Փարաիկայ	9 (7-7)
5.- Պրագիլ	8 (6-5)
6.- Չիլի	7 (8-9)
7.- էքուատոր	7 (7-9)
8.- Փերու	4 (4-5)
9.- Պոլիվիա	4 (4-7)
10.- Վենեզուելա	3 (5-16)

ՊՈԼՈՆԻ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԱՐԶԻՉ

Ռումանիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը երէկ ըսաւ, թէ միջազգային նախկին միջնապահ Լուիսիո Պոլնի ուշադրութեամբ ազգային խումբին մարզիչ փոխարինելով Էմերիչ Իենէյը: 47 տարեկան Պոլնի երէկ երկու տարուան պայմանագրութիւն մը ստորագրեց ֆետերասիոնին հետ, ապագային երկու տարիով եւս երկարաձգելու իր պայմանագրութիւնը:

108 անգամ Ռումանիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը կրած Պոլնի նշանակած է միջազգային 28 կոլ: 1986ին, ան իր ակումբին՝ Շթեուա Պուրէշի հետ յաջողեցաւ շահիլ Եւրոպայի բաժակը («ՉԷՖԻԿԱ ԼԻԿ»):

Իրեն մարզիչ ան պաշտօնաւարած է Պելմիլիայի եւ Ֆրանսայի մէջ: Եղած է Նախի մարզիչ: 63 տարեկան Իենէյը, որ 1980ականներուն եղած է Պոլնիի մարզիչը, երբ անոնք մաս կը կապէին Շթեուա Պուրէշի, այժմ պիտի ըլլայ Ռումանիոյ 21 տարեկան վար կրտսերներու ազգային խումբին թեքնիք պատասխանատուն:

Ռումանիա Պոլնիի հետ իր առաջին մրցումը պիտի կատարէ յառաջիկայ Օգոստոս 16ին, Պուրէշի մէջ տեղի ունենալիք Լեհաստանի դէմ բարեկամական մրցումին:

ՓՈՒԼ ԼԲԵՅ ԱՍՊԱՐԷՉԸ

Հուլիանի միջազգային իրաւարար Սանտոր Փուլ, որ 1994ի Մոնտիալին Պրագիլ - Իտալիա աւարտական մրցումը ղեկավարած էր, շաբաթասկիզբին լքեց իր ասպարէզը:

45 տարեկան Փուլ ըսաւ, թէ իրեն համար շատ մը կարեւորագոյն մրցումներու ղեկավար եղած ըլլալը իրեն տուած է մեծ բաւարարութիւն, մասնաւոր Պրագիլ - Իտալիա կարեւոր ճակատումին ցմամբ: Հետեւաբար այժմ ւլ ընելիք չունի եւ կը լքէ ասպարէզը:

Ան միջազգային իր առաջին մրցումը կատարեց 1984ին, երբ Պրագիլի մէջ տեղի ունեցած ճակտկան մրցումին միջազգային մրցումին միջազգային բարեկամական մրցումին իրաւարարը եղած էր:

Փուլ միջազգային իր առաջին պաշտօնական մրցումը կատարեց Շուէտի մէջ՝ Եւրոպայի պիտանուակէն մրցաշարքին գծով, իսկ տարի մը ետք Եու. Է. Էֆ. Ա. Ի բաժակի մրցաշարքին Եուրոպայի մրցումին իրաւարարը եղաւ:

1997ին ան եղաւ Եւրոպայի բաժակի («ՉԷՖԻԿԱ ԼԻԿ») մրցաշարքի աւարտական մրցումին իրաւարարը, որ դարձեալ տեղի ունեցաւ Եուրոպայի մրցումին իրաւարարը Տորթմոնտի միջեւ:

Իր ասպարէզին ընթացքին (1984էն ի վեր) Փուլ Հուլիանի միջազգային ֆուտբոլի ֆետերասիոնի մէջ 25 մրցումի իրաւարարը եղած է:

ԼՈՒՐԵՐ ՖՈՐՄԻԼԱ Ի ԱՇԽԱՐՀԷՆ

●ՖՈՐՄԻԼԱ Ի բրիտանացի վարորդ ճոնի Հերպրթ երէկ Ֆրանսֆորթի մէջ հարցազրույցի մը ընթացքին ըսաւ, թէ այս եղանակի աւարտին պիտի լքէ իր ասպարէզը եւ Միացեալ Նահանգներու մէջ կայացող շաբթիկի փոխանակութեան պիտի մասնակցի:

Հերպրթ, որուն դիրքը լրջօրէն վտանգուած էր ժակուարի մէջ, ըսաւ, թէ յառաջիկայ ամիս վերջնականապէս յատկացած կ'ըլլայ, թէ ի՞նչ պիտի ըլլայ իր ասպարէզը:

●ԳԵՐՄԱՆԻՈՅ կրան փրիլի (Հոքընհայմ) նախօրեակին, Ֆորմիլա Ի գերմանացի վարորդ Հայնց Հարալտ Ֆրեյցըն երէկ իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ իր պայմանագրութիւնը չճորտըն «խումբին» հետ երկարաձգած է մինչեւ 2002ի աւարտը:

●ՖՐԱՆՍԱԿԱՆ Փէօօ ընկերութիւնը յայտարարեց, որ այս եղանակի աւարտին պիտի լքէ Ֆորմիլա Ի աշխարհը, երբ տարի Փրոսթ ընկերութեան հետ գործակցելէ ետք:

Շատոնց կը սպասուէր Փէօօյի այս յայտարարութիւնը, որովհետեւ յատկացաւ այս եղանակին անկախ շատ տկար արդիւնք կ'արձանագրէ: Փրոսթ իտալական Միլապոյի «խումբին» կողքին միակն է, որ ցարդ տեղի ունեցած 10 մրցումներէն (ընդամենը՝ 17) ոչ մէկ կէտ ապահոված է:

●ՈՒԻԼԻ ՌԵՊԵՐ, որ գերմանացի վարորդ Միլայիլ Զուլմարի խումբին Ֆորմիլա նախագահն է, երէկ իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ Շուլի պիտի մնայ Ֆորմիլա հետ եւ այդ մէկը շատ հաւանաբար մինչեւ անոր 40 տարեկան ըլլալը...

31 տարեկան Զուլմարի մինչեւ 2002 թուականը պայմանագրութիւն մը ստորագրած է Ֆորմիլա հետ:

Ուելլըր կ'ըսէ, թէ յոյս ունի, որ Շուլի տակաւին երկար տարիներ կրնայ իրենց վարորդը մնալ եւ կ'աւելցնէ, որ Հոքընհայմի կրան փրիլին նախօրեակին, Շուլմարի վեց կէտի առաւելութիւնը՝ Մաքլարընի վարորդ Տէյլիտ Բուլլարտի վրայ, անոր առիթ պիտի տայ, որպէս իր 3րդ անգամ ըլլալով աշխարհի փոխանակութեան հաւանաբար:

Կիրակի օր տեղի ունենալիք կրան փրիլին նախօրեակին, վարորդներու դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

1. Միլայիլ Զուլմարի (Գերմանիա) Ֆորմիլա 56
2. Տէյլիտ Բուլլարտ (Բրիտանիա) Մաքլարըն 50
3. Միքա Հաքինէն (Ֆինլանտա) Մաքլարըն 48
4. Ռուպէն Պարիլեյլո (Պրագիլ) Ֆորմիլա 36
5. Ճիանքարիօ Ֆիլիպելլա (Պրագիլ) Պենեթոն 18
6. Ռայֆ Զուլմարի (Գերմանիա) Ուիլիլմս 14
7. Փաք Վիլլընսթոլ (Բանտա) ՊԱՐ 11
8. Տարնօ Թրուլի (Իտալիա) Ճորտըն 6
9. Հայնց - Հարալտ Ֆրեյցըն (Գերմանիա) Ճորտըն 5
10. Ճենարն Պարթըն (Բրիտանիա) Ուիլիլմս 5
11. Միքա Սալօ (Ֆինլանտա) Սաուպըր 4
12. Էտի Ըրվայն (Անգլիա) Ժակուար 3
13. Եսու Վերսպալտըն (Հոլանտա) Արոյ 2
14. Ռիքարտօ Չոնթա (Պրագիլ) ՊԱՐ 1
15. Փելտրօ Տը Լա Բոպա (Սպանիա) Արոյ 1

Ստորեւ՝ «խումբերուն» դասաւորումը:

	ՎԷՏ
1. Ֆորմիլա	92
2. Մաքլարըն	88
3. Ուիլիլմս	19
4. Պենեթոն	18
5. ՊԱՐ	12
6. Ճորտըն	11
7. Սաուպըր	4
8. Ժակուար	3
8. Արոյ	3

ԺՈՐՃ ՌԵՎԵՐՍ ԶԱՋՈՐԴ «ԿԱՅԱՐԱՆ»Ը ՈՒՐ...

Ա. Ա. Միլան երէկ համաձայն գտնուեցաւ իր բերիլի իր յառաջապահին՝ Ժորճ Ուէլլիս ստորագրած համաձայնագիրը չեղեցաւ համաժողով, անոր առիթ տալով, որ ազատ փոխանցուածով մը միանայ իր նախասիրած կազմին:

Անցեալ եղանակին Ուէլլիս ակումբին մ

